**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. N ՄՊ/344-Ա

ք. Արմավիր

## ՍԱՄՍՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2026 թվականի հունիսի 19-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին երկարատև հիվանդության կապակցությամբ, տրամադրել միանվագ դրամական օգնություն մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ 395200 (երեք հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ՝ Ա. Հակոբյան)՝ քաղաքացիական ծառայողի միանվագ դրամական օգնության ֆինանսավորումն իրականացնել աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների խնայողությունների հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ